ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հոկտեմբերի 2024 թվականի թիվ 258 - Ա

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ԵՎ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-26-Ը ՏԵՂԱՑԱԾ ՀՈՐԴԱՌԱՏ ԱՆՁՐԵՎՆԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 4-Ի ԹԻՎ 1043-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ ԱՂԵՏԻՑ ՏՈՒԺԱԾ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԳՐԱՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ԿԱՐԵՆ ՕՐԲԵԼՅԱՆԻՆ ԵՎ ԱՅՐՈՒՄ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԵՆ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի թիվ 1043-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Նոյեմբերյան համայնքի արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի թիվ 27, թիվ 23 արձանագրությունները, արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող մարզային հանձնաժողովի եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2024 թվականի հուլիսի 9-ի թիվ 186-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի՝ 2024 թվականի սեպտեմբերի 27–ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունը.

որոշում եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերում 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով աղետի գոտում ֆիզիկական անձանց պատճառված վնասի փոխհատուցման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի թիվ 1043-Ն որոշման համաձայն սույն որոշման հավելվածում ընդգրկված Նոյեմբերյան համայնքի Բագրատաշեն

գյուղի բնակիչ՝ Կարեն Օրբելյանին և Այրում քաղաքի բնակիչ՝ Արմեն Սահակյանին աղետի հետևանքով անհատական բնակելի տանը և կենցաղային առաջնային գույքին պատճառված վնասների փոխհատուցման նպատակով տրամադրել 8.000.000 /ութ միլիոն/ ՀՀ դրամ՝ ըստ փոխհատուցման ուղղությունների:

2. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2024 թվականի հուլիսի 9-ի թիվ 186-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի թիվ 1043-Ն որոշման հավելվածի «Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերում 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով աղետի գոտում ֆիզիկական անձանց պատճառված վնասի փոխհատուցման» կարգի 5-րդ և 6-րդ գլուխների պահանջների կատարումը:
3. Հանձնաժողովի նախագահին՝ յուրաքանչյուր ամսվա առաջին տասնօրյակում ինձ ներկայացնել տեղեկատվություն գործընթացի վերաբերյալ:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2024-10-01 12:10:52 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ք. Իջևան
01 հոկտեմբերի 2024թ.

Հավելված 1

ՑՈՒՑԱԿ

Ֆիզիկական անձանց, որոնց անհատական բնակելի տներին և կենցաղային առաջնային գույքին ս/թ մայիսի 25-26 Դեբեդ և Աղստև գետերի վարարումների հետևանքով պատճառվել է վնաս

| Մարզ | Համայնք | Անշարժ գույքի հասցեն | Անշարժ գույքի կադաստրային ծածկագիրը | Անուն, Ազգանուն, Հայրանուն | Ծննդյան օր, ամիս, տարի | Անձնագիր/նույնական ագման քարտ | Հանրային ծառայությունների համարանիշը (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը) | Էլեկտրոնային փոստի հասցեն | Բջջային հեռախոսահամար |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տավուշ | Նոյեմբերյան | Բագրատաշեն 4փ. 1 խճ 45/1 | 11-016-0048-0024 | Կարլեն Օրբելյան | 8/8/1958 | Ն/ք 010242345 | 1808580435 | aro.orbelyan@gmail.com | 098079759 |
| | | Այրում երկաթուղային փ 4 տուն | 11-012-0005-0002 | Արմեն Սահակյան | 5/28/1973 | AL 0671597, 15.03.2024, 047 | 3805730187 | naraolen78@gmail.com | 093337722 |

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված 2

Ցուցակ

ՀՀ Տավուշի մարզում աղետի գոտում ֆիզիկական անձանց անհատական բնակելի տանը պատճառված վնասի փոխհատուցման

ՀՀ դրամ

| Համայնք | Բնակավայր | Անուն, ազգանուն | Փոխհատուցման գումար | 1-ին փոխանցում | | 2-րդ փոխանցում | | 3-րդ փոխանցում | | 4-րդ փոխանցում | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Նոյեմբերյան | Բագրատաշեն 4փ. 1 խճ 46/1 | Կարլեն Օրբելյան | Ընդամենը | 25% | | 25% | | 25% | | 25% | |
| | | | | 60% անկանխիկ | 40% կանխիկ | 60% անկանխիկ | 40% կանխիկ | 60% անկանխիկ | 40% կանխիկ | 60% անկանխիկ | 40% կանխիկ |
| | | | 2,000,000 | 300,000 | 200,000 | 300,000 | 200,000 | 300,000 | 200,000 | 300,000 | 200,000 |
| | Այրում երկաթուղային փ 4 տուն | Արմեն Սահակյան | Ընդամենը | 25% | | 25% | | 25% | | 25% | |
| | | | 4,800,000 | 720,000 | 480,000 | 720,000 | 480,000 | 720,000 | 480,000 | 720,000 | 480,000 |

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված 3

# Ցուցակ

ՀՀ Տավուշի մարզում աղետի գոտում ֆիզիկական անձանց կենցաղային առաջնային գույքին պատճառված վնասի փոխհատուցման

ՀՀ դրամ

| Համայնք | Բնակավայր | Անուն, ազգանուն | Փոխհատուցման գումար | որից անկանխիկ և կանխիկ | | 1-ին փոխանցում | 1-ին փոխանցում | 2-րդ փոխանցում | 2-րդ փոխանցում |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Նոյեմբերյան | Այրում երկաթուղային փ. 4 տուն | Արմեն Սահակյան | Ընդամենը | 60% անկանխիկ | 40% կանխիկ | 70% անկանխիկ | 70% կանխիկ | 30% անկանխիկ | 30% կանխիկ |
| | | | 1,200,000 | 720,000 | 480,000 | 504,000 | 336,000 | 216,000 | 144,000 |

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ